

ԱՆԳԻՈՒԼԻ, ԱՆԴՐԷԱՍ, պրոֆ. Նէապոլսի համալս.: ՖԻԼՍՈՖԱՅՈՒ-
ԹԻԻՆԸ ԵՒ ԴՊՐՈՑԸ:

Գրածքը, մի առաջաբանից
դուրս, չորս բաժին ունի. 1) Ֆիլո-
սոֆալուծեան խնդիրները, 2) Փոր-
ձառութեան քննադատութիւնը ու
գիտակցութեան ուսմունքը, 3) Ուս-
մունք տիեզերքի զարգացման մա-
սին, 4) Ուսմունք բարոյագիտութեան
մասին:

Հեղինակը պարզ կերպով վեր-
լուծում է ամենակարևոր խնդիր-
ները, որոնք երևան են դալիս հոգե-
բանական, բարոյագիտական, սոցիա-
լական, կրօնական և մանկավարժա-
կան ասպարէզների վերադ. Հեղի-
նակը համոզեցուցիչ կերպով բացատ-
րում է մի գիտնական բնազանցա-

բանութեան (մեթաֆիզիկալի) սոհրա-
թեշտութիւնը, որը պէտք է լինի, որ-
պէս զի գիտակցութեան աշխարհը
տեղի պահանջը լրացնելի, որին մաս-
նաւոր գիտութիւնները բաւարարու-
թիւն տալ չեն կարողանում: Նոյն-
չափ աջող է ալն տարրերի վերլու-
ծութիւնը, որոնք գոյացնում են փոր-
ձառութիւնը և որոնց սահմանափա-
կելը հոգու գիտակցական երևոյթների
չբջանակով և առհասարակ անձնա-
կան շրջանով՝ հեղինակը մեր-
ժում է:

Բ.

ԿՆԱՊՊ, ԳԵՈՐԳ ՖՐԻԴՐԻԽ, ԳԻԻՂԱՅԻՆԵՐԻ ԱԶԱՏՈՒՄԸ ԵՒ ԳԻԻՂԱ-
ԿԱՆ ԲԱՆԻՈՐՆԵՐԻ ԾԱԳՈՒՄԸ ՊՐՈԽՍԻԱՅԻ ՀՆԱԳՈՅՆ ՄԱՍԵՐՈՒՄ:
Երկու մաս. Լայպցիգ, 1887, տպ. Դունկեր և Հումբլտ. VII+352
և VI+473 երես. զինը՝ 16 մարկ:

Պարոն Կնապպը Ստրասբուրգի
համալսարանի քաղաքական գիտու-
թիւնների պրոֆեսսորներիցն է և ցա-
ժըմ լատինի էր որպէս ստատիստիկոս:
Բայց նորա լսողները գիտեն, որ նա
զբաղւում է քաղաքատնտեսական
խնդիրներով առհասարակ, մասնա-
ւորապէս Գերմանիայի գիւղական
հանգամանքների և օրէնսդրութեան
խնդիրներով: Վերը լինած գրքով նա

հանդիսանում է արդէս որպէս քա-
ղաքատնտես և աշխ. վերին աստիճա-
նի աջողակ կերպով: Ներկայ գիրքը
պատկանում է ամենակարևոր աշխա-
տանքներին, որոնք ցալժմ լուս են
տեսած Գերմանիայի հասարակական
հանդամանքների զարգացման մասին:
Հեղինակը աշխատում է պատասխա-
նել այս հարցին, թէ ի՞նչպէս հիւսի-
սաղին և արեւելեան Գերմանիայի մի-

ծագողն մատում նախկին ոչ-աղատ (ճորտային) աղղարնակութիւնը փոխւեց ալժմեան մանր կաւածատէրերի և օրալարձ բանւորներին: Այդ փոփոխութեան ակնկալունի պատճառները օրէնսդրութեան մէջ պէտք է որոնել, որի նպատակն էր զիւղական աղղարնակութեան ճորտութիւնից աղտոնելը: Պետական այդ օրէնքների մասին հեղինակը տալիս է շատ ճիշդ և հիմնաւոր հաշիւ: Եւ իւր այդ աւարկան հեղինակը երկու ձեռով է ուսումնասիրում: Ամենազխաւոր բուպէներին և ֆաղիսներին համար՝ նա զիմում է մի տեսակ զիւլլումատիական պատմագրութեան, որի համար

ամենակարեւոր դիւանական թղթերը բառ առ բառ առաջ է բերում: Չորան է նւիրած զրքի երկրորդ մասը: Առաջին մասը նւիրած է բուն լուսաբանութեան, Ալդուդը նա մանրամասնօրէն խօսում է հին հանգամանքների մասին և թէ ի՞նչպէս սոքա փոխւեցին և ի՞նչ դրութեան մէջ է ալժամ այդ զիւղական բանւոր դասակարգը: Նա շօշափում է անգամ խնդիրներ, որոնց լուծելը միայն ապագային է վիճակւած: Բնաորոշ է հեղինակի սառը պատմական եղանակը, որով նա խօսում է ամենաաւրող խնդիրների մասին:

Ա.

ՁԻՏՏԱՐԴ, ՅՈՎԱՔՓ, ՈՒՍԻԱԾՔԵՆԵՐ ԵՒ ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ. 3 Հատոր, Համբուրգ, 1889 թ., տպ. Ֆոս, իւրաքանչիւրը 8 մարկ.
(Sittard, Jos, Studien und Kritiken):

Այս խորագրով լատինի երաժշտական գրող Ջիտտարդը հրատարակել է լուսածների մի շարք, որոնք արժանի են երաժշտագէտների ուշադրութեան:

Առաջին հատորում, որը խորագրած է՝ «Խառն թերթեր» (Bunte Blaetter), զետեղւած են բաւականին լուսածների աւելի ընդհանուր և պատմական բովանդակութիւնով, որոնց մէջ աւելի աչքի են ընկնում «Բաւլէութեան նամակներ» և մի քանի նաղատութիւն վիէննայի լատինի կրթականից: Հանսլիկի գրքի՝ կոնցերտների և կոմպոզիտորների մասին: Ընդունելով իսկ նորա ծառայութիւն-

ները, հեղինակը նորան մեղադրում է աչառութեան և միակողմանիութեան մէջ: Կարդալու արժանի է նաև «Պարի պատմութիւնը Գերմանիայում»:

Երկրորդ հատորը՝ «Արեւտադէտներ ընտրող մեներ» — կոնցերտի դասակարգի (Künstler—Charakteristiken. Aus dem Concertsaal) տալիս է նախ մի շարք լուսածների ներկայիս արեւտադէտների մասին, որոնցից նոքա, որոնք վերաբերում են Վագների և Լիստին, Ֆոն Բիւլօւին և Յոլհաննէս Բրահմսին՝ ընդհանուր հետաքրքրութիւն են շարժում: Հեղինակը այդ երաժիշտների զիմաց միանգա-